



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԱԿՆԵՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ԵԿԵՂԵՑՈՅ ԱՆԱՈՒՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ**

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԷ  
 Ս. ՆԱՀԱՏԱԿԱՅ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ**

Շաբաթ, Նոյեմբեր 3-ը մեր եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն Ամենայն Սրբոց տօնն էր, որ միաժամանակ Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ անուանակոչութեան օրն է. այս առիթով Կիրակի, Նոյեմբեր 4-ին, Եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցուի Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ:

Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ մատաղօրհնէք պիտի կատարէ Թեմիս բարեջան Առաջնորդ, Բարձր. Տ. Սուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան եւ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը պիտի փոխանցէ:

Ս. Խորանին պիտի սպասարկեն Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներէն՝ Յոզ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան եւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Ռազմիկ Ընկ. Խաչատուրեան:

Պատարագէն ետք հաւատացեալները հրաւիրուած են մատաղի օրհնութեան, պատրաստուած եկեղեցւոյ Տիկնանց Միութեան կողմէ, որ տեղի պիտի ունենայ եկեղեցւոյ կից «Լետիսեան» սրահին մէջ:

Շաբաթ, Նոյեմբեր 3-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Ս. Նահատակաց եկեղեցւոյ անուանակոչութեան նուիրուած տարեկան ճաշկերոյթ մը տեղի պիտի ունենայ «Ալետիսեան» սրահին մէջ:

Ձեռնարկը կը վայելէ հովանաւորութիւնը Թեմիս բարեջան Առաջնորդ Սրբազան Յօր, եւ կազմակերպուած է Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Յոգաբարձութեան կողմէ:

**PRELATE TO CELEBRATE DIVINE LITURGY AT  
 HOLY MARTYRS ON THE NAME DAY OF THE CHURCH**

On Sunday, November 4<sup>th</sup>, All Saints' Day and the name day of Holy Martyrs Church in Encino will be celebrated with Episcopal Divine Liturgy and *madagh*. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy, deliver the sermon, and preside over the blessing of the *madagh*.

Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian and Parish Pastor Rev. Razmig Khatchadourian will assist at the altar.

The blessing of *madagh*, which is prepared by the parish Ladies Association, will take place following Liturgy at “Avedissian” Hall.

The annual banquet of the church will take place on the evening of Saturday, November 3<sup>rd</sup>, at “Avedissian” hall. The banquet is being held under the auspices of the Prelate and is organized by the Board of Trustees.

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱՉԱՆԸ ԱՅՑԵԼԵՑ ԱՉԳ. ՖԵՐԱԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ուրբաթ, 2 Նոյեմբերի առաւօտուն այցելեց Ազգային Ֆերահեան Երկր. վարժարանի երկու համալիրները եւ վերամուտի առիթով իր օրհնութիւնները բաշխեց վարժարանի տնօրէնութեան, դաստիարակներուն, անձնակազմին, աշակերտներուն եւ ծնողներուն: Առաջնորդ Սրբազանին կ'ընկերանար Ս. Նահատակաց եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ թժ. Տ. Ռազմիկ Զինյ. Խաչատուրեան:

Առաջնորդ Սրբազանը առաջին հերթին այցելեց վարժարանին Էնսիւնոյի համալիրը, ուր դիմաւորուեցաւ Տնօրէնին՝ Տիար Ժան Գոսաքեանի, ուսուցիչներու եւ Տրդ, 10րդ, 11րդ եւ 12րդ դասարաններու աշակերտներուն կողմէ:



Յաջորդաբար խօսք առին Տնօրէնն ու Առաջնորդ Սրբազանը. Տիար Ժ. Գոսաքեան ողջունեց Առաջնորդ Սրբազանին ներկայութիւնը եւ հրաւիրեց իր պատգամը տալու:

Զրիստոսի Անմիտ Մեծահարուստին առակը իբրեւ նիւթ ընտրելով, Առաջնորդ Սրբազանը աշակերտները յորդորեց վարելու չափաւոր կեանք մը: Ան յիշեցուց, որ Հոկտեմբերը Հայ Մշակոյթի ամիս էր,

հետեւաբար՝ վեր առաւ մեր հոգեմտաւոր ժառանգութեանց հաւատարիմ մնալու Հայ Աշակերտին պարտականութիւնը, մաղթելով, որ ինչպէս մեր բոլոր վարժարաններուն, այնպէս այլ Ֆերահեան վարժարանի աշակերտները իրենց կեանքներուն անբաժանելի մէկ մասը ընեն մեր Գիրը, պատմութիւնն ու իրաւունքները:

Այնուհետեւ, Առաջնորդ Սրբազանը ուղղուեցաւ վարժարանին Փարթինիայի համալիրը, ուր դիմաւորուեցաւ Նախակրթարանի աշակերտներուն ու ուսուցչական կազմին կողմէ: Այս հանդիպումին, Առաջնորդ Սրբազանը իր պատգամին նիւթ ընտրած էր Ս. Գրային Հրաշալի Ձկնորսութիւնը դրուագը: Դեռատի աշակերտներուն մատչելի ձեւով,

Առաջնորդ Սրբազանը յորդորեց սորվիլ ու հաւատարիմ մնալ հայութեան քրիստոնէական ու ազգային ավանդներուն:

## PRELATE VISITS FERRAHIAN SCHOOL

On the morning of Friday, November 2<sup>nd</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, visited both campuses of Ferrahian School and conveyed his blessings to the principal, teachers, staff, students, and parents. The Prelate was accompanied by Holy Martyrs Pastor Rev. Razmig Khatchadourian.

The Prelate began his visit at the Encino campus where he was welcomed by Principal John Kossakian, teachers, and 8<sup>th</sup>, 10<sup>th</sup>, 11<sup>th</sup>, and 12<sup>th</sup> grade students. Following his welcoming remarks, Mr. Kossakian invited the Prelate to deliver his message. The Prelate began his message by referencing the Parable of the Rich Fool and counseling the students to live a sensible and moderate life. He then reminded the students that during the month of October we celebrated the Armenian Culture and spoke of the responsibility of each Armenian student to remain faithful to our heritage and to make our language and history and inseparable part of their lives.



The Prelate subsequently headed to the Parthenia campus where he was greeted by teachers and students. In his message to the students the Prelate cited the story of Jesus and the Miraculous Catch of Fish and urged them to learn about and to remain loyal to our faith and national traditions.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԶԻՊԱՏՈՍ ԱՐՄԵՆ ԼԻՆՈՅԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Լոս Անճելըսի մէջ Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոս Տիար Արմէն Լիլոյեան Չորեքշաբթի, 31 Հոկտեմբերի կէսօրին այցելեց Ազգային Առաջնորդարան եւ ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ:

Հանդիպումին ներկայ եղան Մեծի Տանն Կիլիկիոյ երեց



միաբաններն Գերշ. Ս. Եփրեմ Արք. Թապազեան, Կրօնական Ժողովի ատենապետ Գերպ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան եւ Ազգային Վարչութեան անդամներն Տիար Վահան Պզտիկեան:

Հայրենի ներկայացուցիչը տեղեկութիւններ փոխանցեց Հայաստանի կացութեան մասին: Խորհրդակցութեան նիւթ եղան Հայ Դատի ներկայի աշխատանքները, ինչպէս նաեւ՝ ամիս մը ետք նախատեսուած աւանդական թելեթոնն ու զայն կանխող կարգ մը ձեռնարկները: Առաջնորդ Սրբազանը ծանօթութիւններ փոխանցեց Ուաշինկթըն իր այցելութեան եւ ընդհանրապէս Ազգ. Առաջնորդարանի գործունեութեան ու թեմական ծրագիրներու մասին, միաժամանակ բարձր գնահատելով Տիար Լիլոյեանի ու հիւպատոսարանի դերակատարութիւնը:

Հանդիպումի աւարտին, Առաջնորդ Սրբազանն ու Գլխաւոր Հիւպատոսը յուշանուէրներ փոխանակեցին, ապա Առաջնորդ Սրբազանը մասնակիցները հիւրասիրեց ճաշով:

## **THE HONORABLE CONSUL GENERAL OF ARMENIA ARMEN LILOYAN VISITS THE PRELACY**

On Wednesday, October 31<sup>st</sup>, the Honorable Armen Liloyan, Consul General of the Republic of Armenia in Los Angeles, visited the Prelacy and was



welcomed by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate.

Participating in the meeting were H.E. Archbishop Yeprem Tabakian, Very Rev. Fr. Muron Aznikian, Chairman of the Religious Council and Executive Council member Mr. Vahan Bezdikian.

Among the topics of discussion was the current state of affairs in Armenia, the recent activities in pursuit of the Armenian Cause, as well as the upcoming Telethon and various other events. The Prelate conveyed details of his recent trip to Washington, D.C., and the general activities of the Prelacy and parishes. The meeting concluded with the Prelate commending the efforts of the Consul General and the Consulate as a whole. Following the exchange of mementos the Prelate hosted lunch for the honorable guest and meeting participants.

## **ԱԶԳ. Վ. ԵՒ Ա. ՇԱՄԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ Ա. ԿԱՐԳԻ ԱՇՎԵՐՏՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԱՅՅԵԼԵՑԻՆ**

Ազգային Առաջնորդարանի ընդհանրապէս հանդարտ ու խաղաղ շրջափակը Երեքշաբթի, 30 Հոկտեմբերի կեսօրուան մօտ մանկական ճրուղղիւններով կենսաւորուեցաւ, երբ հոն ժամանեցին Ազգ. Վահան եւ Անուշ Շամլեան վարժարանի Ա. Կարգի աշակերտները, ընկերակցութեամբ

իրենց ուսուցիչներուն, ծնողներու եւ վարժարանի Հայկական Ակումբի անդամներուն:

Աշակերտները Ազգային Առաջնորդարան հրաւիրուած էին Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ, որ վերամուտի առիթով մեր վարժարանները իր այցելութեանց ծիրին մէջ, հանդիպում ունեցած էր նաեւ այս դասարանի աշակերտներուն հետ ու զանոնք հրաւիրած էր Առաջնորդարանիս նորակառոյց շէնքը:

Դեռատի մանուկներուն հետաքրքիր աչուկները կը մատնէին, թէ ասիկա դպրոցի շրջափակէն դուրս ուշագրաւ պտոյտ մըն էր իրենց համար: Ուսուցիչներուն ու ծնողներուն առաջնորդութեամբ, անոնք նախ խմբուեցան Ազգ. Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն Մատուռ»ին մէջ, ուր զիրենք ընդունեց Առաջնորդ Սրբազանը, ընկերակցութեամբ քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի գոյգ վարիչներուն՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեանի ու Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիմեանի: Միասնաբար Տերունական Աղօթքը կատարելէ ետք, Առաջնորդ Սրբազանը ողջունեց աշակերտները, ուսուցիչներն ու ծնողները, ապա, մանուկներուն ուղղուած հարցումներով, բացատրութիւններ տուաւ Աստուծոյ Տան եւ իրենց անունը մատրան շնորհած սուրբերուն մասին:

Այնուհետեւ, մանուկները առաջնորդուեցան «Տիգրան եւ Չարուհի Տեր Ղազարեան» սրահը, ուր շարունակուեցաւ մտերմիկ հանդիպումը: Հայկական Ակումբի ներկայացուցիչները Առաջնորդ Սրբազանին համար ունէին նուէր մը. նմանապէս՝ դեռատի աշակերտները, որոնք իրենց գծանկարներով պատրաստուած պաստառ մը բերած էին իբրեւ յուշանուէր:

Առաջնորդ Սրբազանին շնորհակալութեան ու օրհնութեան խօսքերէն ետք, երկու Հայր Սուրբերը աշակերտներուն որոշ բացատրութիւններ տուին քրիստոնեական մեր հաւատքին ու Ազգային Առաջնորդարանին մասին: Առաջնորդ Սրբազանը, իր կարգին, դեռատի հիւրերուն ու անոնց ընկերակիցներուն վերապահած էր յատուկ նուէրներ՝ տօնական օրերու յատուկ վիտօ-երիզներ ու Ազգ. Առաջնորդարանին մասին վաւերագրական ժապաւեններ:

Հրաժեշտէն առաջ, հիւրերը հաւաքական լուսանկար մը ունեցան Առաջնորդարանի մուտքին: Յետոյ, ճշուողիկը մեկնեցաւ...



## V. & A. CHAMLIAN FIRST GRADE STUDENTS VISIT THE PRELACY

On the morning of Tuesday, October 30<sup>th</sup>, first grade students of Vahan and Anoush Chamlian School visited the Prelacy accompanied by their teachers, parents, and Armenian club members. The students had been invited

by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, during his visit to the school at the start of the new academic year.

Under the supervision of their teachers and parents the students



gathered in the “St. Dertad and St. Ashkhen” Chapel where they were greeted by the Prelate and Christian Education Directors Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian. Following the Lord’s Prayer the Prelate welcomed the students and imparted information to them about the Chapel and the Saints after which it is named.

The students were then escorted to “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall where members of the Armenian club offered the Prelate a memento, a poster of their collective drawings. The Prelate offered his thanks and blessings, after which the two Rev. Fathers gave further explained to the students about our Christian faith and the activities of the Prelacy. At the conclusion of the visit, the Prelate presented the students with religious videos and a DVD of the Prelacy’s history.

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՄԱՉԳԱՅԻՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Երեքշաբթի, 30 Հոկտեմբերի յետմիջօրէին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը Համազգայինի երեք ներկայացուցիչներու, որոնք Ազգային Առաջնորդարան եկած էին ներկայացնելու 18 Նոյեմբերին նախատեսուած՝ Նոր հրատարակուած գիրքի մը նուիրուած ձեռնարկին մանրամասնութիւնները:

Պատուիրակութեան մաս կը կազմէին Շրջանային Վարչութեան անդամներէն՝ Տիկին Ասիթա Հաւաթեան եւ յիշեալ ձեռնարկի յանձնախումբի անդամներէն Տիկնայք Նորա Եագուպեան եւ Լուսին Զուխաճեան: Անոնք յայտնեցին, որ 18 Նոյեմբերին, Հոլիվուտի «Տաղլեան» սրահին մէջ կազմակերպած են ճաշկերոյթ մը, որուն ընթացքին պիտի ներկայացուի Դաւիթ Խերտեանի Նոր հրատարակուած *Forgotten Bread* հատորը, նուիրուած՝ ամերիկահայ առաջին սերունդի գրողներուն: Ձեռնարկին հասոյթը պիտի յատկացուի լրագրութեան եւ յարակից ճիւղերու մէջ բարձրագոյն ուսման հետեւող հայ ուսանողներու:



Հիւր համազգայնականները Առաջնորդ Սրբազանը հրաւիրեցին ձեռնարկին ու խնդրեցին անոր օրհնութիւնը:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց այս նախաձեռնութիւնը, որ կը ծառայէ մէկէ աւելի բարի նպատակներու: Ան յաջողութիւն մաղթեց Համազգայինի այս ու նմանօրինակ նախաձեռնութիւններուն:

## **PRELATE MEETS WITH REPRESENTATIVES OF HAMAZKAYIN**

On the afternoon of Tuesday, October 30, representatives of Hamazkayin met with H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, to relay details of an upcoming dinner and book signing. The delegation included Regional Executive member Mrs. Anita Havatian, and organizing committee members Mrs. Nora Yacoubian and Lucine Choukajian.

The members had come to invite the Prelate to a book presentation and signing of David Kherdian's newly published book "Forgotten Bread", and to ask for his blessing. The event will take place on Sunday, November 18, at Taglyan Hall in Hollywood. All proceeds will go to scholarship funds for Armenian students in the writing and journalism fields.

The Prelate commended their efforts and wished success to all of Hamazkayin's undertakings.

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԷՆ ՄԱՐԻԱ ՄԻԻՐԱՆԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ**

Ուրբաթ, 26 Հոկտեմբերի յետմիջօրէին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Սարտիրոսեան Ազգային Առաջնորդարանին մէջ ընդունեց «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Լոս Անճելըսի բաժանմունքի տնօրէն Տիկին Մարիա Միհրանեանի այցելութիւնը:



Տիկին Միհրանեան եկած էր Առաջնորդ Սրբազանին հաղորդելու ամիս մը ետք նախատեսուած Թելեթոնի նախապատրաստական աշխատանքներուն մասին: Ան յայտնեց, որ համաձայն տարիներու աւանդութեան, թելեթոնը տեղի պիտի ունենայ Գոհաբանութեան տօնին օրը, Հինգշաբթի, 22 Նոյեմբերին, KCET կայանէն: Այս առիթով, կազմակերպուած է մեկնարկի ճաշկերոյթ-ընդունելութիւն մը, որ տեղի պիտի ունենայ 1 Նոյեմբերին, հիւրընկալութեամբ Տիար Արմէն Խաչատուրեանի եւ Տիկին Մարիա Միհրանեանի: Ներկայ պիտի ըլլայ Հայաստանի Սահմանադրական ատենախ

Նախագահ եւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի փոխ նախագահ Տիար Գագիկ Յարութիւնեան: Իսկ 18 Նոյեմբերին, տեղի պիտի ունենայ Հիմնադրամի տարեկան ճաշկերոյթը, Լոս Անճելըսի Օմնի պանդոկին մէջ. պատուոյ հիւրերը պիտի ըլլան Արցախի նախագահ Բազօ Սահակեան եւ Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի հայրենաշէն գործունեութիւնը, որուն մասնակից է ամբողջ հայութիւնը: Ան մաղթեց, որ յառաջիկայ թելեթոնը նոր յառաջխաղացք արձանագրէ բաղդատմամբ նախընթաց տարիներուն, այն համոզումով, որ Հայրենիքը կը պատկանի ողջ հայութեան ու անոր վերականգնումի աշխատանքին մասնակից պէտք է ըլլան Հայաստանն ու Սփիւռքը՝ հաւասարապէս:

## **PRELATE WELCOMES ARMENIA FUND PRESIDENT MARIA MEHRANIAN TO THE PRELACY**

On the afternoon of Friday, October 26, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed Armenia Fund President Maria Mehranian to the Prelacy. Mrs. Mehranian had come to the Prelacy to convey information to the Prelate regarding the planning of the annual Telethon which, in keeping with tradition, will take place on Thursday, November 22<sup>nd</sup>, Thanksgiving Day.

The annual gala is scheduled for Sunday, November 18, with guest of honor H.E. Bako Sahakyan, President of the Republic of Nagorno Karabakh, and H.E. Vartan Oskanian, Foreign Affairs Minister of Armenia. On Thursday, November 1<sup>st</sup>, a pre-gala reception will take place hosted by Mr. Armen Khatchadourian and Mrs. Maria Mehranian. Among the guests who will be in attendance is the president of the Constitutional Court of Armenia and Vice-President of Armenia Fund International Mr. Gagik Harutyunyan.

During their meeting the Prelate highly commended the undertakings of Armenia Fund and wished unprecedented success for the Telethon, stressing that Armenia is the homeland of all Armenians and we must all participate in the rebuilding process.